



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 35

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ *ավագանին որոշում է.*

**Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 10 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝**

1. Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 49 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:**

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՄՄԵՆ

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԶԱՆԻԿ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղնի, 1-ին փող. 6  
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020 թվականի N 36

**ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 49  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջների՝ *սպազանին որոշում է.*

1. Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի «Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 49 որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ -6

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱԶԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ 

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ 

ՄԻՍԱԿՅԱՆ ԵՐԶԱՆԻԿ 

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ 

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ 

ՏԱՇԶՅԱՆ ՄԱԹԵՆԻԿ 

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ 

ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ



**ՀԱՎԵԼՎԱԾ**

Պտղնի համայնքի ավագանու  
2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 49 որոշման  
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ  
Պտղնի համայնքի ավագանու  
2020 թվականի հոկտեմբերի 12-ի N 36 որոշման

**ԿԱՐԳ**

**ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնքի ղեկավարի՝ (այսուհետ՝ համայնքի ղեկավար) կամավոր լիազորությունների (այսուհետ՝ լիազորություններ) իրականացման կարգը:
2. Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:
3. Կամավոր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան:
4. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ բնագավառներում՝  
**պաշտպանության կազմակերպման բնագավառ**
  - 1) Քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեության համար – 100 000 ՀՀ դրամ:
  - 2) Զինձառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների և զոհված ազատամարտիկների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման համար տրամադրել դրամական օգնություն 50 000-ական դրամ:**կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ**
  - 1) Պտղնիի միջնակարգ դպրոցին տրամադրել դրամաշնորհ – 1 104 000 ՀՀ դրամ:
  - 2) Հայոց բանակի օրվա կապակցությամբ նվերներ և միջոցառման կազմակերպում – 150000 ՀՀ դրամ:
  - 3) Կանանց միամսյակի համար նվերներ և միջոցառման կազմակերպում – 300000 ՀՀ դրամ:
  - 4) Մեպտեմբերի 1-ի և վերջին գանգի կապակցությամբ – 500000 ՀՀ դրամ:
  - 5) Ամանորյա նվերներ և միջոցառման կազմակերպում – 500000 ՀՀ դրամ:**առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ**
  - 1) Համայնքի բուժկետին տրամադրել դրամաշնորհ – 500 000 ՀՀ դրամ:**աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ**
  - 1) Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցներին արձակուրդի տրամադրման հետ մեկտեղ վճարել բուժման գումար մեկ ամսվա աշխատավարձի չափով:
  - 2) Հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման համար յուրաքանչյուր դիմող բնակչին տրամադրել մինչև 50 000 ՀՀ դրամ:
  - 3) Յուրաքանչյուր ընտանիքում նոր ծնված երեխայի համար միանվագ տրամադրել 30 000-ական ՀՀ դրամ:
  - 4) Թաղման ծախսերի փոխհատուցման համար տրամադրել միանվագ գումար 70 000-ական ՀՀ դրամ:
  - 5) Հատուկ ղեպքերում հուղարկավորության նպաստ սահմանել մինչև 300 000 ՀՀ դրամ:**օրենսդիր և գործադիր մարմինների պահպանման բնագավառ**
  - 1) Համայնքի ղեկավարի բջջային հեռախոսի վարձավճար 2 հեռախոսահամարների համար՝ ամսեկան 15000 ՀՀ դրամ:
  - 2) Համայնքի ղեկավարին ամրակցված NISSAN ALTIMA ծառայողական մեքենայի համար՝ օրեկան 6 լիտր բենզին:
  - 3) Համայնքի ղեկավարի տեղակալին ամրակցված AUDI A6 ծառայողական մեքենայի համար՝ օրեկան 1 լիտր բենզին և ամսեկան 100 խմ սեղմված գազ:
  - 4) Աշխատակազմի քարտուղարին ամրակցված VAZ 21063 ծառայողական մեքենայի համար՝ օրեկան 1 լիտր բենզին և ամսեկան 150 խմ սեղմված գազ:
5. Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

Պտղնի համայնքի ղեկավար՝

Ա. Վիրաբյան

